

բազում համբերութիւնս յամենայն գործս իւր ցուցաներ, եւ բազում ամներ նշանս եւ զսքանչելիս: 35 Եւ էին նորա երկու դստերք. եւ ետ զմինն Ասրկոյ ումեն կին. զկնի աներոյն իւր՝ նա կալաւ զաթոռն խաղայ:

ԳԼՈՒԽ ԺԳ.

1 Յաղագս որ ինչ իբրեւ դարձաւ սուրբ կաթողիկոսն Ներսէս յերկրէն Յունաց, թէ ո՛րպէս կշտամբեր զարքայն. կամ ո՛րպէս լինէին նշանք ահագինք ի վերայ աւանին Արշակաւանի, եւ սատակեցան առ հասարակ յանկարծաւրէն ամենայն բազմութիւն մարդկան՝ որք յայնմ տեղուջ էին:

2 Այլ իբրեւ սատակեցաւ կայսրն, դարձան ամենայն հովիւքն եպիսկոպոսքն՝ որք աքսորեալք էին, եւ կեցեալք էին յիւրաքանչիւր քաղաքս: 3 Յայնժամ դարձաւ եւ սուրբ կաթողիկոսն Ներսէս յանապատ ի կղզւոյ անդի, ուր էր զնոսա արգելեալ. եւ համաշխարհի էին ինդրուածք. միւսանգամ աշխարհի շնորհեցաւ: 4 Իբրեւ եկն յաշխարհն Յայոց, ընդ առաջ երթային նմա ի գաւառաց գաւառաց եպիսկոպոսք հանդերձ իւրաքանչիւր ժողովրդովք, եւ նախարարք ամենայն եւ ամենայն գաւառակալք: 5 Եւ բերէին առաջի նորա զիւրաքանչիւր հիւանդս, եւ բժշկեր զնոսա. ուր եւ բազում իսկ եւ կարի յաճախեր գոհութիւն ի փառս Աստուծոյ. եւ ամենայն մարդիկն առ բազում գութ հովուապետին՝ համարէին զանձինս իւրեանց թէ ինքեանք իբրեւ զնոսա ի գերութենէ դարձեալ իցեն:

6 Եւ ամենին ուրախութիւն բազում հոգեւորս մեծաւ ցնծութեամբ: 7 Համաշխարհ ամենայն ոք իւրաքանչիւր Տեառն Աստուծոյ գեղեալ ուխտս կատարէին, որ ի վերայ հոգեւոր զանձին հայրապետին՝ որ առաւ նոցա. եւ կատարեաց նոցա զինդրուածս նոցա, եւ զորբութիւն սրտառութեան անձանցն սրտկեղ ցաւոցն սրտաբեկութեանն, միւսանգամ սիրով գթով վարդապետութեամբ հոգեւոր հարբն մխիթարեաց զամենեսեան: 8 Ամենեքեան ի դժնէ տրտմութենէն զուարթացեալք, յուրախութիւն դառնային: 9 Ինքն իսկ թագաւորն Արշակ երթայր ընդ առաջ նորա, մինչեւ ի կողմանս Բաքասերոյն, եւ անդի մեծաւ զուարթութեամբ դարձան: 10 Եւ սկսան նորոգել եւ պայծառանալ վարք աշխարհի եւ կարգացն եւ աւրինացն եկեղեցեացն:

11 Այլ իբրեւ եկն հայրապետն Ներսէս ի Հայս, ի վերայ հասաներ իւրում տեղապահին սրբոյն խաղայ, զի էր կացեալ ի ճշմարտութեան եւ յուղղութեան, եւ զնացեալ էր զճանապարհս Տեառն Աստուծոյ, եւ ոչ էր թիրեալ յաջ կամ յահեակ, բազում գոհութիւնս մատուցաներ Աստուծոյ, զի զխաղ զհոգեւոր որդեակն իւր եգիտ ըստ կամացն՝ որպէս ինքն կամեր. զնա անձկով տեսաներ: 12 Այլ յորժամ լսեր ի խաղայ զամենայն զանաւրէնութիւնսն չարութեանն ծուռ զնացիցն թագաւորին, տրտմեր լայր ողբայր եւ կոծեր մեծամեծ